

Արձանագրություն N 5

ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/32 ծածկագրով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետով՝ գնանշման հարցմամբ համակարգչային տեխնիկայի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան
29.04.2019թ.

ժ. 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Առուստամյան
Անդամներ՝ Ա. Մկրտչյան, Ա. Բաղդասարյան, Ն. Մանվելյան, Ա. Աղուզումյան
Քարտուղար՝ Ա. Մակարյան

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը
գնահատելու մասին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Առուստամյան

1.Ընդունելի զիտություն, որ՝

Զ/Ը	Մասնակիցների տվյալները	
	«Ին-Թեքնոլոջի» ՍՊԸ info@itech.am	«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ info@alpha.am
	գնային առաջարկը (ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի)	
1	7497500	
2	4920750	
3	10642500	

4		6416000
5		5424150

1.1. <<Ինո-Թեքնոլոջի>> ՄՊԸ-ն սահմանված ժամկետներում ներկայացրել է համապատասխան շտկումները և առաջարկել է հետևյալ տարբերակը.

Սնուցման սարքի հովացուցիչի PWM ֆունկցիայով աշխատելու գաղափարը կայանում է նրանում, որ հովացուցիչը ավտոմատ կերպով դանդաղեցնի կամ ավելացնի պտույտների արագությունը:

Առաջարկված սնուցման բլոկի հովացուցիչը կառավարվում է temperature control ֆունկցիայով, որը ըստ էության կատարում է նույն գործողությունը՝ ավտոմատ կերպով դանդաղեցնում կամ ավելացնում պտույտների արագությունը:

Այն ու ամենայնիվ, որպեսզի լիովին բավարարենք մրցույթում նշված տեխնիկական բնութագրին, մենք փոխարինում ենք նշված սնուցման բլոկի հովացուցիչը "deepcool DPGS-FGS-GS120" հովացուցիչով, որը ունի PWM ֆունկցիա՝ որանով իսկ ապահովելով "հովացուցիչը 12cm անձայն PWM ֆունկցիայով" մրցույթի պահանջը: Այն միացված լինելով մայրական սալիկին հնարավորություն է տալիս նաև հետևել կամ կարգավորել հովացուցիչի արագությունը:

Դրանով չի խախտվում ապրանքի նոր և չօգտագործված լինելու պահանջը:

Որպես օրինակ կարող ենք բերել հետևյալ դեպքը՝ որևէ արտադրողի կողմից արտադրված դյուրակիր համակարգչի օպերատիվ հիշողության ավելացում կամ փոխարինում ավելի մեծ ծավալով օպերատիվ հիշողությամբ, կամ կոշտ սկավառակի փոխարինում պինդ մարմնային կուտակիչով:

Նույն կերպ, սնուցման բլոկի հովացուցիչը՝ շարքից դուրս գալու, աղմուկ հանելու, կամ ավելի հզոր հովացուցիչով տեղադրելու անհրաժեշտության դեպքում կարող է փոխարինվել, ինչը ոչ մի կերպ չի անրադառնում սնուցման բլոկի աշխատանքի և մնացած պարամետրերի վրա:

1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոսանքի բլոկի հովացուցիչի փոփոխությունը գործարանային վիճակի փոփոխություն է, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոսանքի բլոկի հովացուցիչի PWM ֆունկցիան համակարգչի աշխատանքի վրա չունի կրիտիկական նշանակություն, հետևաբար նախընտրելի է սկզբնական առաջարկվող տարբերակը:

1.3. Հանձնաժողովը որոշեց <<Ինո-թեքնոլոջի>> ՄՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը համարել բավարար:

1.4 Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ
(ԳՊ/ԳԱՊ)՝
Անդամներ (ԳՊ/ԲԱ)՝



Ա. Առուստամյան



Ա. Աղուզումցյան



Ա. Բադալյան

Անդամներ (ԳՊ/ԳԱ)՝



Ա. Սկրտչյան



Ն.Մանվելյան

Քարտուղար՝



Ա. Մակարյան